Գևորգ Էմին

Ինչով է մեր երկիրը մեծ

Ինչո՞վ է մեր երկիրը մեծ,
Նա՛, որ հազար անգամ զոհվե՛ց,
Բայց հարությո՛ւն առավ նորից,
Խոր Վիրապի՛ց, Վայոց Ձորի՛ց...
Որ, մնացած միայն մի բուռ,
Այն էլ, ավա՜ղ, ո՛չ նույն բռում,
Որպես հրից փրկված խաչբուռ,
Ծլո՜ւմ է այս քար ու ղռում...
.....
Նրանով չէ՞ արդյոք նա մեծ,
Նրանով չէ՞, որ նա տևեց,
Որ օտարի հող չգերե՛ց,
Այլ Վահագնի ե՛րգը գրեց.
Սրին հաղթեց խոփով արդա՛ր,
“Սիրեց ղալամ, գիր ու դավթար”,
“Կռո՛ւնկ” երգեց օտար ափում.
“Լո՛- Լո՛” - ջարդի սև սարսափում.
Որ սպանվե՛ց, բայց չմեռա՜վ,
Որ սպառվե՛ց, բայց չկորա՜վ,
Ինչպես իր տան նոր ձեղունին
Թառած ճերմակ այս աղավնին,
Որ լեգենդի պես հնաբույր,
Ոտքերն՝ արնո՛տ,

Ինքը՝ մաքո՛ւր,
Արյան ծովից ելա՛ծ կրկին,
Աչքը հառած արեգակին,
Նրա նման հարատևում
Եվ գալիք է, նայի՛ր, թևո՛ւմ...